ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 2-ը օգոստոսի 2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազար մարմնի կողմից ստացված պարզաբանման և <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազար մարմնի կողմից ստացված պարզաբանման և <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման քննարկման մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 Քննարկելով մասնակցի կողմից համատեղ գործունեության պայմանագրով հանդես գալու դեպքում գնային առաջարկը ԱԱՀ-ով կամ առանց ԱԱՀ ներկայացված լինելու պարագայում լիազոր մարմնի կողմից ստացված պարզաբանումը /կցվում է/, գնահատող հանձնաժողովը որոշեց <ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ> ԱՁ-ի հայտը մերժել, քանի որ <ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ> ԱՁ-ն ընթացակարգին մասնակցել է համատեղ գործունեության պայմանագրով «Երվադա» ՍՊԸ-ի հետ և գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի:
<Դամբայ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները, գնահատող հանձնաժողովը քննարկել է այն և գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:
1-ին և 4-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտարարվել է չկայացած, քանի որ ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:
1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 02.08.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <Դամբայ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13-ը հուլիսի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ), ՀՀ ՊՆ տեղակալի 13.07.2018թ. 397/ԴՎԱ հրաման:

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-րդ դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 12.12.2016թ. կնքված ՇՀԾՁԲ-7/10-3 գնման պայմանագրի N 2 համաձայնագիրը 6 000 000 ՀՀ դրամ առավելագույն գումարով, որը պակաս է 3-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանված առավելագույն գումարի քսան և հիսուն տոկոսից, ինչպես նաև բացակայում է ՇՀԾՁԲ-7/10-3 գնման պայմանագիրը:

Բացի այդ, <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հանձնաժողովը որոշում է կայացրել <Դամբայ> ՍՊԸ-ին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Քանի որ <ԱՐԱՄ ՋԱՐԳԱՐՅԱՆ> ԱՁ-ն ընթացակարգին մասնակցել է համատեղ գործունեության պայմանագրով «Երվադա» ՍՊԸ-ի հետ և գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 254-րդ հոդվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետը, որով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, որոշեց կասեցնել նիստը և դիմել լիազոր մարմին վերոնշյալ հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/7» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <Դամբայ> ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկումը ներկայացնելուց հետո և լիազոր մարմնի կողմից գրության պատասխանը ստանալու հաջորդ աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

0010, Երևան, Մոսկվա-Արաքսի փող. 1

Հեռ՝ (+374 11) 800 [illegible] Ֆաքս՝ (+374 11) 800 [illegible]
Էլ.հասցե՝ [illegible]

03/27-1/13539-18 2018-07-25

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի պատասխան 16.07.2018թ.
թիվ ԳԿԱ/2567 գրության

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությամբ բարձրացված հարցը՝ հայտնում ենք հետևյալը՝

Եթե ընկերությունները գնման ընթացակարգին մասնակցում են որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան կնքված համատեղ գործունեության պայմանագրի կողմեր, ապա ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում հարկային հարաբերությունների կարգավորման առանձնահատուկ դրույթներ են սահմանված: Մասնավորապես, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները հետևյալ դեպքերում՝

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը տվյալ հարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի

[illegible]

[illegible]

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերը համարվում են ԱԱՀ վճարողներ, հետևաբար վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկն իր մեջ պետք է ներառի ԱԱՀ, եթե Օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ գործարքն ազատված չէ ԱԱՀ-ից կամ 65-րդ հոդվածի համաձայն՝ չի համարվում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարք:

Միաժամանակ հայտնում ենք, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿԱՐԵՆ ԹԱՄԱՉՅԱՆ

Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
Կատ. 011 800 258